

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԻՄԻԱ

Ի. Լ. Ալեքսանյան, Լ. Պ. Համբարձումյան, Վ. Ս. Հարությունյան. Բենզ-տեղակալված 2-(2-մերկապտաֆենիլամինո)-4-մեթիլսինոլինների սինթեզ էջ. 3–5

2-Զլոր-4-մեթիլսինոլինների և օ-մերկապտաանիլինի փոխազդեցությունից տարբեր պայմաններում սինթեզվել են բենզ-տեղակալված 2-(2-ամինաֆենիլթիո)-4-մեթիլսինոլիններ և 2-(2-մերկապտաֆենիլամինո)-4-մեթիլ-1,2-դիհիդրոլսինոլիններ, որոնցից վերախմբավորման կամ իզոմերիզացման ճանապարհով ստացվել են համապատասխան տեղակալված 2-(2-մերկապտաֆենիլամինո)-4-մեթիլսինոլիններ:

Լ. Գ. Մանգասարյան, Ս. Ս. Հայրապետյան, Հ. Գ. Խաչատրյան. Հիբրիդային սիլիկահողապոլիմերային սորբենտներ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատագրության համար էջ. 6–10

Զննարկվել է լայնածակոտկեն սիլիկաժելերի և պոլիմերային բաղադրիչների հիման վրա՝ հանքապոլիմերային սորբենտների ստացումը: Հաստատվել է շրջված ֆազերով բարձրարդյունավետ հեղուկային քրոմատագրության մեջ ստացված սորբենտների օգտագործման հնարավորությունը:

Միկրոգնդային սիլիկաժելի մակերևույթին պոլիմերային շերտի ամրացումն իրականացվել է ծակոտկեն մատրիցայի սորբումային շերտում՝ համապատասխան մոնոմերների չոր պոլիմերացման եղանակով:

Ա. Ժ. Համբարձումյան. Գիմեթիլսուլֆօբսիդում դեհիդրոգենացված պոլիմերի լուծույթների խտությունները էջ. 11–16

Ուսումնասիրվել են ԳՄՍՕ-ում դեհիդրոգենացված պոլիմերի (ԳՀՊ) ծավալային հատկությունները 20°-ից 70°C ջերմաստիճանային տիրույթում:

Ցույց է տրվել, որ ԴՄՍՕ-ում ԴՀՊ-ի որոշակի կոնցենտրացիայով լուծույթի խտությունը ժամանակի ընթացքում աստիճանաբար աճում է՝ ձգտելով հաստատուն արժեքի, մինչդեռ լուծույթի նոսրացման դեպքում վերջինիս խտությունը փոփոխվում է անցնելով առավելագույն կետով:

Հ. Հ. Ղազոյան, Շ. Ա. Մարգարյան. Դիէթիլսուլֆոքսիդի մեթանոլի և էթանոլի հետ քիմար համակարգերի խտությունները, հավելուրդային և պարզիալ մոլային ծավալները 298.15–323.15 Կ ջերմաստիճանային տիրույթում էջ. 17–25

Տատանողական ռեզոնանսային խտաչափի օգնությամբ տարբեր ջերմաստիճաններում չափվել են դիէթիլսուլֆոքսիդ+մեթանոլ (էթանոլ) քիմար համակարգերի խտությունները: Խտության արժեքներից հաշվարկվել են հավելուրդային և պարզիալ մոլային ծավալները: Ցույց է տրվել, որ ամբողջ կոնցենտրացիոն տիրույթում, բոլոր ջերմաստիճանների դեպքում հավելուրդային մոլային ծավալները բացասական են: Հաստատվել է, որ դիէթիլսուլֆոքսիդի և ալկանոլների միջև գոյություն ունեն ուժեղ միջմոլեկուլային փոխազդեցություններ:

Լ. Ռ. Հարությունյան. Վիտամին E-ի ազդեցությունը նատրիումի պենտադեցիլսուլֆոնատի էթանոլային լուծույթներում միջմոլեկուլային փոխազդեցությունների վրա էջ. 26–30

Էթանոլ-նատրիումի պենտադեցիլսուլֆոնատ համակարգում մածուցիկաչափության և էլեկտրահաղորդաչափության եղանակներով ուսումնասիրվել է վիտամին E-ի ազդեցությունը միջմոլեկուլային փոխազդեցությունների վրա: Ցույց է տրված, որ համակարգում կարևոր դեր են խաղում սոլվոֆոր փոխազդեցությունները: Հաստատված է, որ վիտամին E-ի և նատրիումի պենտադեցիլսուլֆոնատի մոլեկուլների միջև առաջանում է կոմպլեքս նատրիումի պենտադեցիլսուլֆոնատի միջմոլեկուլային մարզում վիտամին E-ի $(2-3) \cdot 10^{-5} \text{ մոլ} \cdot \text{լ}^{-1}$ կոնցենտրացիայի տիրույթում: Արդյունքում, տեղի է ունենում էթանոլի կառուցվածքի ապակայունացում:

Շ. Վ. Խաչատրյան. Հայաստանի բնական ցեոլիթների օգնությամբ բնական ջրերից ծանր մետաղների կլանումը էջ. 31–35

Հայաստանի բնական ցեոլիթների օգնությամբ բնական ջրերից դինամիկական և ստատիկական մաքրման եղանակներով, փորձ է արվել հեռացնել պղինձը, ցինկը, քրոմը, սնդիկը, մանգանը, մկնդեղը, կապարը և կադմիումը: Մետաղների մաքրման նկատմամբ ցեոլիթները ցուցաբերում են երկու սելեկտիվ շարք: Դինամիկական ռեժիմով մաքրման դեպքում ցեոլիթներն ունեն հետևյալ ընտրողականությունը՝ $\text{Cu} > \text{Pb} > \text{Cd} > \text{Zn} > \text{Fe} \geq \text{Mn} \geq \text{Ni} \geq \text{As} > \text{Cr} > \text{Hg}$, իսկ ստատիկական ռեժիմով մաքրման դեպքում՝ $\text{Cu} > \text{Pb} > \text{Mn} > \text{Cd} > \text{Fe} > \text{Zn} > \text{Cr} > \text{Ni} > \text{As} \geq \text{Hg}$:

Մ. Լ. Երիցյան, Ի. Ն. Սիրեկանյան, Լ. Ն. Երիցյան. Ազոտ պարունակող խելատոնների մագնիսական ընկալունակությունները և մագնիսական մոմենտները
Էջ. 36–38

Հետազոտված են Ni, Co, Cu մետաղների իոնների և ազոտ պարունակող լիգանդների հիման վրա՝ խելատային համակարգերի մագնիսական ընկալունակությունները և էֆեկտիվ մոմենտները: Յույց է տրված, որ այդ համակարգերը պարամագնիսական են և ենթարկվում են Կյուրի-Վեյսի օրենքին:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. Ռ. Աբրահամյան, Ռ. Կ. Պետրոսյան, Է. Ա. Գալոյան, Ֆ. Գ. Դանիելյան, Մ. Ս. Առաքելյան. *Darevskia* ցեղատեսակի երկու կուսածին մողեսների սեզոնային և օրական ակտիվությունները
Էջ. 39–42

Սիմպատրիկ գոտում երկու կուսածին ժայռային մողեսների (*D. armenica*, *D. unisexualis*) սեզոնային և օրական ակտիվությունները համընկնում են:

Տ. Ա. Հայրապետյան, Ա. Վ. Ասլանյան, Գ. Յու. Պապով, Ա. Ս. Ղազարյան. Հայաստանի հարավում տարածված մանր կաթնասունների (*Chiroptera*, *Insectivora*, *Rodentia*) մասին նոր տվյալներ
Էջ. 43–47

Կատարվել է ՀՀ Սյունիքի մարզի մանր կաթնասունների կարգերի (*Chiroptera*, *Insectivora*, *Rodentia*) ուսումնասիրություն: Ստացվել են նոր տվյալներ նշված կարգերի տեսակային կազմի, տարածվածության և քանակի վերաբերյալ: Հայտնաբերվել են տվյալ տարածքի համար նոր տեսակներ որը հիմնավորվել է բջջագեներտիկ ուսումնասիրություններով:

Ժ. Հ. Մուխաելյան, Ա. Պ. Անտոնյան, Մ. Վ. Մինասյանց. ԴՆԹ-ի հետ էթիդիումի բրոմիդի կոմպլեքսների թթվային բնափոխման հետազոտությունը
Էջ. 48–53

Աշխատանքում իրականացվել են ԴՆԹ-ի հետ էթիդիումի բրոմիդի (ԷԲ)-ի կոմպլեքսների թթվային և ջերմահրահրված բնափոխումներ: Ստացվել են ԴՆԹ-ի և ԷԲ-ի հետ նրա կոմպլեքսների պարույր-կծիկ անցման կորերը $0 \leq r_b \leq 0.5$ կոնցենտրացիայի հարաբերակցության փոփոխության միջակայքում, որտեղ $r_b = [\text{լիգանդ}]/[\text{ԴՆԹ}]$: Բացահայտվել է, որ ԷԲ-ի կոնցենտրացիայի մեծացմանը զուգընթաց անցման կետը տեղաշարժվում է այդ գործոնների մեծ արժեքների կողմը: Բացահայտվել է նաև, որ ԷԲ-ն ինչպես ոչ պրոտոնացված, այնպես էլ պրոտոնացված վիճակում կարող է փոխազդել ԴՆԹ-ի հետ մի քանի եղանակներով, ընդ որում լիգանդի կապման մեխանիզմները համանման են:

Ա. Ա. Անտոնյան, Ս. Գ. Շարոյան, Ա. Ա. Հարոյան, Ռ. Հ. Հարությունյան, Ս. Ս. Մարդանյան. Սինովիալ հեղուկում ադենոզինդեամինազի իզոմերը ռևամատիդային արթրիտի ժամանակ էջ. 54–57

Ադենոզինդեամինազի (ԱԴԱ) ակտիվության մակարդակը զգալիորեն տարբերվում է ռևամատիդային արթրիտով և հողերի ոչ բորբոքային ախտահարումներով հիվանդների սինովիալ հեղուկներում (ՍՀ): Միջինից բարձր և ցածր ակտիվություն ունեցող նմուշների ֆերմենտը բաժանվել է ցածր- և բարձրամոլեկուլային իզոմերի: Պարզվել է, որ ԱԴԱ բարձր ակտիվության դեպքում մեծանում է ցածրամոլեկուլային ձևերի հարաբերությունը բարձրամոլեկուլայինին: Ենթադրվում է, որ բորբոքումների դեպքում ֆերմենտի ընդհանուր ակտիվության աճը պայմանավորված է ԱԴԱ-ի ներբջջային, ցածրամոլեկուլային ձևի արտազատմամբ: ԱԴԱ-ի արգելակումը՝ դրանով իսկ հակաբորբոքային ադենոզինը ֆերմենտով ձևափոխումից պաշտպանումը, կարելի է դիտարկել որպես նոր մոտեցում ռևամատիդային արթրիտների բուժման համար:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մ. Ռ. Հովհաննիսյան. *Hemiptera* ընտանիքի որոշ տեսակի բզեզների ֆերոմոնի բաղադրամասս 4-օքս-2(E)-դեցենալի սինթեզը էջ. 58–60

Հոդվածում նկարագրված է 2-պրոպիլ-1-ոլի հիման վրա 4-օքս-2(E)-դեցենալի՝ *Hemiptera* ընտանիքի որոշ տեսակի բզեզների ալոմոնի և ֆերոմոնի բաղադրամասի, սինթեզի նոր եղանակ: